ՀՏԴ 329(479.243)

Պատմություն
Նունե Սարումյան,
պ.գ.թ., դոց. ԱրՊՀ Պատմության ամբիոն

ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ՝ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է այն քաղաքական իրավիճակը, որի արդյունքում 1988 թվականին ծավալվեց արցախյան շարժումը, և այն հանդիսացավ ազգային զարթոնքի դրսևորում: Փորձ է արվում ցույց տալու,որ արցախահայությունը ոտքի ելավ պաշտպանելու իր ազգային ինքնուրույնություն ու անկախությունը: Սակայն, ի պատասխան արցախահայության խաղաղ ցույցերի Ադրբեջանն ուժ կիրառեց, ինչն հանգեցրեց ռազմական գործողությունների:

Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ողբերգական իրադարձություններ՝ արցախահայությունը 1991թ. սեպտեմբերի 2-ին ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի միավորմամբ հռչակեց Լեռնային Ղարաբաղի անկախ Հանրապետությունը:

Բանալի բառեր: *գոյապայքար, պատվիրակություն, ազգային զարթոնք, հանրահավաք, հանրագիր, խտրական քաղաքականություն, հակամարտություն,«Ղարաբաղ» կոմիտե, «Կռունկ» կոմիտե, ցույց, միացում, արցախահայություն:*

Нунэ Сарумян
к.и.н., доцент АрГУ

АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ КАК ПРОЯВЛЕНИЕ НАЦИОНАЛЬНОГО ВОЗРОЖДЕНИЯ

В статье представлена та политическая ситуация, в результате которой в 1988 году началось карабахское движение и это было проявлением национального пробуждения. Попытка показать то,что население Арцаха встало на защиту своего национального суверенитета и независимости. Но в ответ на мирные протесты армян Арцаха Азербайджан применил силу, что привело к кровопролитным военным действиям.

Преодолев многочисленные трудности, трагические события, население Арцаха 2 сентября 1991 года объединением Нагорного Карабаха и Шаумянского района провозгласила независимость Нагорно-Карабахской Республики.

Ключевые слова: *борьба за существование,представительство, национальное возрождение, всенародное собрание, дискриминационная политика, противостояние, комитет «Карабах» комитет «Крунк», митинг,присоединение,армяне Арцаха.*

Nouneh Sarumyan
PhD.,docent at ASU History Chair

ARTSAKH MOVEMENT AS A MANIFESTATION OF NATIONAL AWAKENING

The article presents the political situation as a result of which Artsakh movement evolved in 1988 as a manifestation of national awareness. The article attempts to reflect that Artsakh Armenians stood up to defend their national identity and independence.

However, the Azerbaijan responded to the peaceful rallies of Artsakh Armenians by brute force, which resulted in military clashes. Overcoming adversities and tragedies, Artsakh Armenians declared NKAO and the Shahumyan region as Nagorno Karabagh Republic on September 2, 1991.

Key words: *the struggle for existence, delegation, national awakening, assembly, petition, discrimination policy, conflict, committee "Kharabagh", committee "Krunk", rally, unification, Artsakh Armenians*

Այսօր, 28 տարվա հեռավորությունից, մենք՝արցախիներս սառնասրտորեն ենք վերլուծում քաղաքական այն իրավիճակը, որում հայտնվեցինք 1988 թվականի փետրվար ամսին:

Գաղափարա-քաղաքական նոր տեսանկյունից հետադարձ հայացք նետելով տարիների հեռավորության վրա կարող ենք առանց երկընտրանքի փաստագրել, որ 1988 թվականը ազգային զարթոնքի տարեթիվ է, ազգային զարթոնք, որն անխուսափելի անհրաժեշտություն էր տնտեսապես, քաղաքականապես,սոցիալական ու մշակութային ասպարեզներում կեղեքվող ու ոտնահարվող արցախահայության համար:

Պատմական վերլուծության ենթարկելով Արցախ աշխարհում 1988 թվականից սկսված իրադարձությունները՝ կարող ենք ընդգծել, որ արցախահայությունը և, ընդհանրապես, ողջ հայությունը, կրկին պայքարի ելավ, իհարկե, սկզբում չգիտակցելով, որ այն կտանի ռազմական ակտիվ գործողությունների ծավալման ուղիով, պաշտպանելու իր ազգային ինքնուրույնությունն ու անկախությունը:

Խորհրդային երկրում, 1985թ. սկզբներից սկսած, ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Մ.Ս.Գորբաչովի կողմից հռչակված վերակառուցումը ինչ-որ չափով քաղաքական հրապարակը լցրել էր ժողովրդավարության, հրապարակայնության, անհատի ու ազգի իրավունքների պաշտպանության բարձրագոչ խոստումներով:

Երևի թե ամենից շատ քաղաքական այդ նոր կուրսը ոգևորել էր հայ ժողովրդին, հատկապես՝ արցախահայությանը:Մարզի ամբողջ հայ բնակչությունը միանգամից խանդավառ եռուզեռ ապրեց՝ հուսալով իրականացած տեսնել տասնամյակների իր երազանքը, աշխատավորության խմբեր ու անհատներ էին մեկնում Երևան, առաջարկում էին վերստին բարձրացնել մարզը Հայաստանին վերամիացնելու հարցը, պահանջում ու

պայքարում, որ այն վերջնական լուծում ստանա: Այդ ներկայացուցիչների ու առանձին խմբերի ծայրը Մոսկվա էլ հասավ:

1986-1987 թվականներին արցախահայերը ստորագրություններ հավաքեցին Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը վերամիավորելու օգտին և ուղարկեցին վերադաս իշխանություններին: 1987 թվականի դեկտեմբերից մինչև 1988 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածում չորս անգամ[1] պատվիրակություն մեկնեց Մոսկվա, որոնց ընդունեցին կուսակցական և պետական մարմինների ղեկավարները:

1987 թվականի դեկտեմբերին Արցախից պատկառելի մի պատվիրակություն[2], որի կազմում կային պատգամավորներ (մեկը ԽՍՀՄ ԳԽ-ի), պաշտոնյաներ, մշակույթի անվանի մարդիկ, ուղևորվեց Մոսկվա, հանդիպումներ ունեցավ մի շարք ղեկավարների, նույնիսկ ԳԽ-ի նախագահության նախագահի տեղակալ Պ.Ն.Դեմիչևի հետ, և վերադարձավ այն համոզմամբ, թե երկրի ղեկավարությունը պատրաստ է մարզը միացնելու Հայաստանին: Պ.Ն.Դեմիչևն, օրինակ, պատվիրակությանն ասել է՝ ոչինչ չի կարող խանգարել, որպեսզի հայկական ինքնավար մարզի հիմնական բնակչության միահամուռ-միասնական ցանկությունը կատարվի[3]: Հասկացրել է նաև, որ դրա համար անհրաժեշտ պիտի լինի նոր համախոսականներ կազմակերպել:

Մի քանի օրից հետո Զորի Բալայանի ղեկավարությամբ, սկսվեց դիմում-համախոսականների հոսքը Ստեփանակերտից Մոսկվա: Չէր կարելի կասկածել, որ ամեն ինչ կատարվելու է բարեհաջող ու բարձր մակարդակով. և մի քանի օրում Մոսկվա տարան ավելի շատ համախոսականներ, քան 1966 թվականին էր եղել:

Արցախյան երկրորդ պատվիրակությունը Մոսկվա հասավ 1988թ.հունվարի 7-ին[4]: Այն գլխավորում էր ԽՍՀՄ ԳԽ-ի պատգամավոր Վազգեն Բալայանը: Պատվիրակության անդամներն էին Արկադի Կարապետյանը, Սերժ Առուշանյանը, Գուրգեն Շահրամանյանը, Արթուր Մկրտչյանը և ուրիշներ[5], որոնք ներկայացնում էին մարզի քաղաքային և գյուղական աշխատավորությունը, մտավորական շրջանները: Երևանում պատվիրակությանը միացավ նախկին հադրութեցի Իգոր Մուրադյանը:

Մոսկվայում պատվիրակությանը ընդունեց ԳԽ-ի Նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ.Ն.Դեմիչևը և Կենտկոմի ազգային հարաբերությունների բաժանմունքի վարիչ Վ.Ա.Միխայլովը: Պատվիրակությունը նրանց հանձնեց մարզի բոլոր մակարդակների պատգամավորների, ղեկավար աշխատողների և աշխատավորության հեղինակավոր ներկայացուցիչների (թվով 260 հոգի) հանրագիրը[6],որի մեջ նկարագրվում էր մարզի հայության նկատմամբ ադրբեջանական իշխանության կողմից կիրառվող խտրական քաղաքականության ու նրա հետևանքների մասին, և պահանջվում էր մարզը հանել Ադր.ԽՍՀ-ի կազմից, վերամիացնել այն ՀԽՍՀ-ին: Ներկայացվեցին նաև մարզի հարյուրավոր բնակիչների անհատական ու խմբակային բազմաթիվ նամակներ և հարցին վերաբերող հին ու նոր կարևոր փաստաթղթեր: Իր հերթին պատվիրակությունը խորհրդային կառավարության իշխանության մարմինների ներկայացուցիչներից ստացավ հարցի լուծման հեռանկարի խոստում և գործը շարունակելու խրախուսանք:

Պատվիրակությունը Արցախ վերադարձավ հունվարի 13-ին և մարզը գտավ փոթորկված վիճակում: Տեղի էին ունենում աշխատավորական լայն զանգվածների ժողովներ, հանրահավաքներ, որտեղ պահանջում էին Արցախը հանել Ադրբեջանի կազմից, միացնել Հայաստանին: Այդ օրերին արցախահայության տրամադրությունը բաժանում էր նաև հարևան ադրբեջանցիների մի զգալի մասը, որոնք ստորագրել էին արցախահայության հանրագրերը, նույնիսկ հանրահավաքներում քննադատել ու դատապարտել Ադրբեջանի ղեկավարության խտրական քաղաքականությունը մարզի հանդեպ:

1988 թվականի հունվար-փետրվար ամիսներին մարզի բոլոր ձեռնարկություններում, կոլտնտեսություններում, սովխոզներում, ուսումնական հաստատություններում տեղի ունեցան կոլեկտիվների ընդհանուր ժողովներ, սկզբնական կուսակցական կազմակերպությունների նիստեր, գյուղական, ավանային, քաղաքային և շրջանային խորհուրդների նստաշրջաններ, որոնցում բնակչության պահանջով քննարկվեցին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը Հայաստանի ԽՍՀ-ի հետ վերամիավորելու հարցը: Եվ բոլոր տեղերում էլ միանման որոշումներ ընդունվեցին՝ խնդրել վերադաս մարմիններին հարցը լուծել դրականորեն: Այդ որոշումները պաշտպանեցին Ստեփանակերտի կուսակցության քաղկոմի, Մարտակերտի, Ասկերանի, Հադրութի և Մարտունու կուսակցության շրջկոմների բյուրոներն ու պլենումները: Մարզի բնակչությունից, աշխատանքային կոլեկտիվներից, կուսակցական և պետական կազմակերպություններից հարյուրավոր հեռագրեր և նամակներ ուղարկվեցին կենտրոնական մարմիններին՝ խնդրելով Լեռնային Ղարաբաղը վերամիավորել ՀԽՍՀ-ի հետ:

Արցախահայության երրորդ պատվիրակությունը կազմված էր հիմնականում մարզի մշակույթի գործիչներից, որոնց կրկին ընդունել է ԽՄԿԿ ԿԿ ազգային հարաբերությունների բաժանմունքի վարիչ Վ.Ա.Միխայլովը և մեծ հույսի խոստումներ տվել հարցի լուծման առթիվ: Իսկ այդ նույն ժամանակ Արցախում ժողովրդական ցույցեր էին տեղի ունենում, բնակչությունը ժողովներ էր հրավիրում, ընդունում որոշումներ, ուղարկում կենտրոնական մարմիններին: Ադրբեջանի ղեկավարները՝ Կենտկոմի առաջին քարտուղար Կ.Բաղիրովը, երկրորդ քարտուղար Կոնդրատևը, ԿԿ բաժնի վարիչ Ա.Ասադովը և ուրիշներ, ինչպես նաև ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատակից Վ.Յաշինը շտապեցին Ստեփանակերտ և ինչպես մարզկենտրոնում, այնպես էլ մարզի տարբեր վայրերում ունեցած հանդիպումների ժամանակ երդվում էին անհապաղ վճռել բոլոր հարցերը, միայն թե վերացվի Արցախը Հայաստանին միավորման պահանջը:

[1] Տես՝ Թովմասյան Վ.Հ., Աթաջանյան Վ.Ա., Ներսիսյան Յու.Բ., Ղարաբաղյան հարց, Ստեփանակերտ, 1991, էջ 10:
[2] Տես՝ Խորհրդային Ղարաբաղ,Ստեփանակերտ, 1987,
[3] Տես՝ Նույն տեղում:
[4] Տես՝ Նույն տեղում,1988:
[5] Տես՝ Նույն տեղում:
[6] Տես՝ Նույն տեղում:

Սակայն արցախահայությունն այլևս չէր կարող նրանց խոստումներին հավատալ և շարունակեց պաշտպանել իր պահանջը:

1988թ. փետրվարի 13-ի լույս 14-ի գիշերը, երբ Ստեփանակերտում տեղի ունեցավ առաջին ցույցը, Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ բաժնի վարիչ Ա.Ասադովը Կենտկոմի քարտուղարներ Կոնովալովի և Օրուջևի, ինչպես նաև ԼՂԻՄ-ի մարզկոմի առաջին քարտուղար Բ.Կևորկովի ներկայությամբ[1],կուսակցության մարզկոմի բյուրոյի նիստում սպառնալով հայտարարեց, որ «հարյուր-հազարավոր ադրբեջանցիներ պատրաստ են ցանկացած ժամանակ ներխուժել Ղարաբաղ»[2]: Իսկ Բ.Կևորկովն էլ, որ դեռ հույս ուներ ճնշել ժողովրդի հուզումները, մեծ դաժանությամբ ու լկտիությամբ հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղը կդարձնի հայերի գերեզմանոց: Այս սպառնալիքների մասին փետրվարի 16-ի լույս 17-ի գիշերվա ժամը 1-ին քաղկոմի առաջին քարտուղար Զ.Մովսիսյանը կուսակցության քաղկոմում իրազեկ դարձրեց բոլոր խոշոր ձեռնարկությունների ղեկավարներին, բայց կտրականապես հրաժարվեց իրավիճակի մասին տեղյակ պահող հեռագիր ուղարկել ԽՄԿԿ Կենտկոմ: Հեռագիրն ուղարկվեց միայն 4 օր հետո:

Ադրբեջանի ղեկավարները, ինչպես նաև ԼՂ մարզկոմի առաջին քարտուղարը կերպարանափոխվեցին և արցախահայության գլխին սկսեցին սպառնալիքներ տեղալ, որի արդյունքում 1988 թ. փետրվարի 16-17-ի գիշերները Արցախ հասցվեցին ներքին զորքերի միավորումներ,որոնք էլ սկսեցին վերահսկել մարզ մտնող բոլոր ուղիները՝ կասեցնելու մարզի տարբեր մասերից մարզկենտրոն արտակարգ նստաշրջանի շտապող պատգամավորների մուտքը:

Փետրվարի 20-ին՝ մարզխորհրդի նստաշրջանի անցկացման օրը, որտեղ որոշվելու էր «Հայաստանի հետ ԼՂԻՄ-ի վերամիավորման» հարցը, պետավտոտեսչության աշխատողները, միլիցիան, ՆԳՄ հատուկ ծառայությունները, ադրբեջանական բնակչության կողմից կամավորականները շրջափակեցին Ստեփանակերտը շրջանների հետ կապող բոլոր ճանապարհները,որպեսզի թույլ չտային, որ այնտեղից հայ պատգամավորները գային՝ մասնակցելու նստաշրջանին:

Չնայած ստեղծված արհեստական արգելքներին՝ ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորները Ստեփանակերտի կենտրոնական հրապարակի շուրջ հավաքված (հրապարակը շրջապատված էր հանրապետական և միութենական ներքին զորքերի կողմից) «միացում-միացում» վանկարկող արցախցիների գոչյունների տակ պատմական կարևոր փաստաթուղթ ընդունեցին:

1988 թվականի փետրվարի 20-ին ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում՝ մարզը Ադր.ԽՍՀ կազմից դուրս բերելու և Հայաստանի ԽՍՀ-ին վերամիավորելու մասին՝ նշելով.«Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատավորների ցանկություններին, խնդրել Ադր.ԽՍՀ Գերագույն խորհրդին ու ՀԽՍՀ Գերագույն խորհրդին խորն ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադր.ԽՍՀ կազմից ՀԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ԼՂԻՄ-ը Ադր.ԽՍՀ-ի կազմից ՀԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»[3]:

Փետրվարի 22-ին տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի կուսակցության մարզկոմի Պլենումը, որի ժամանակ Բ.Կևորկովը հեռացվեց գրված պաշտոնից: Կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար ընտրվեց Հ.Պողոսյանը:

ԼՂԻՄ-ի ժողովրդական պատգամավորների Խորհրդի նստաշրջանի դիմումից հետո Հայաստանի աշխատավորները, որ երբեք անտարբեր չեն իրենց արյունակից մասի՝ Ղարաբաղի հայերի ճակատագրին, կատարեցին իրենց բարոյական պարտքը, միահամուռ կերպով Ղարաբաղի հայ բնակչության արդարացի պահանջի պաշտպան կանգնեցին: Դա արտահայտվեց իրենց աշխատավորական կոլեկտիվներում ընդունած որոշումներից, միտինգներից ու ցույցերից, որոնք փետրվարի, 21-ից սկսած, տեղի էին ունենում և՛ Երևանում, և՛ հանրապետության մյուս քաղաքներում: Միտինգներն ու ցույցերը, որոնց մասնակիցների թիվն անցնում էր մի քանի հարյուր-հազարից, անցնում էին երկրում տեղի ունեցող հեղափոխական վերակառուցման մասին լոզունգներով: Ցուցարարները տանում էին ԽՍՀՄ և ՀԽՍՀ պետական դրոշները, լոզունգներ՝ «Վերակառուցում, դեմոկրատիա, հրապարակայնություն», «Լենին,Պարտիա, Գորբաչով» և այլն[4]:Այսպիսի պայմաններում երևան եկան «Ղարաբաղ» կոմիտեն Հայաստանում, և «Կռունկը»(«Միացում») Ղարաբաղում՝ ղարաբաղյան շարժման ղեկավարման համար, որպեսզի թույլ չտրվեն անօրեն գործողություններ, և ազգամիջյան թշնամանք ու կոտորած չհրահրվի:

Ցույցերի առաջին երեք օրվա ընթացքում կենտրոնական և հանրապետական մասսայական լրատվական միջոցները լրիվությամբ անտեսեցին ինչպես միտինգներն ու ցույցերը, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի հրավիրած նստաշրջանի և նրա ընդունած այդ կարևորագույն որոշման փաստը: Ղարաբաղյան պոռթկումների իրավական արմատներն ու պատճառները բացահայտելու փոխարեն խորհրդային ղեկավարները և մամուլի նրանց կամակատարները դիմեցին շարժումը ճնշելու փորձված դեղատոմսերի՝ անվանարկելով այն «ծայրահեղականների ելույթներ», «ազգային էգոիզմի դրսևորումներ» և այլ պիտակներով: Նման անհիմն, անտակտ բնութագրությունը էլ ավելի գրգռեց ժողովրդին և նպաստեց ցուցարարների թվի ավելացմանը: Իսկ մյուս կողմից, այդպիսի անհամապատասխան գնահատականը հնարավորություն տվեց Ադրբեջանի մամուլին ("Бакинский рабочий", "Молодеж Азербайджана", "Азербайджан" և այլն)[5] սանձարձակ պայքար ծավալել ընդդեմ «այդ տականքների», «ծայրահեղականների», «ազգայնամոլների», «սադրիչների խմբի», որոնք համարձակվեցին Լեռնային Ղարաբաղի մասին հարց բարձրացնել: Եվ հետագա օրերին, կենտրոնական և հանրապետական լրատվական միջոցները, մոռանալով միտինգներն ու ցույցերը Ղարաբաղում, իրենց հաղորդումներում շարունակ պրոպագանդում

[1] Տեմ՛ Խորհրդային Ղարաբաղ,Ստեփանակերտ, 1988, 11 նոյեմբերի:
[2] Տես՝ НКР, путь к вершинам, Степанакерт, 2001,стр.81.
[3] Տեմ՛ Խորհրդային Ղարաբաղ, Ստեփանակերտ, 1988,21 փետրվարի:
[4] Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988,стр.60.
[5] Нагорный Карабах. Историческая справка, Ереван, 1988,стр.61.

էին ինտերնացիոնալիզմ և ժողովուրդների բարեկամություն, չնայած որ միտինգներում՝ թե՛ Ղարաբաղում, և թե՛ Հայաստանում, դրանց դեմ հանդես չեն եկել:

Փետրվարի 25-ին գրողներ Սիլվա Կապուտիկյանին և Զորի Բալայանին ընդունեց ԽՄԿԿ ԿԿ քաղբյուրոյի անդամ՝ ԽՄԿԿ ԿԿ քարտուղար Ա.Ն.Յակովլևը, իսկ փետրվարի 26-ին՝ ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Մ.Ս.Գորբաչովը[1]:

Ստեղծված լարված և պայթունավտանգ պայմաններում Մ.Ս.Գորբաչովը դիմում հղեց Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորներին, որում նա կոչում էր «հանգստության», «վերադարձ նորմալ կյանքի ու աշխատանքի»[2]:

1988թ. փետրվարի 27-ին տեղի ունեցավ Հայկական ԽՍՀ Կոմկուսի ԿԿ Պլենումը, որտեղ որոշում ընդունվեց դիմել ԽՄԿԿ ԿԿ Լեռնային Ղարաբաղի հարցի կապակցությամբ հանձնաժողով ստեղծել, և այդ հարցը քննարկել ԽՄԿԿ ԿԿ Պլենումում, որը նախատեսվում էր նվիրել ազգային հարաբերությունների հիմնախնդիրներին[3]:

ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Մ.Ս.Գորբաչովի փետրվարի 26-ի ՀԽՍՀ և Ադրբեջանի աշխատավորներին ուղղված դիմումը ընդունվեց հասկացողությամբ և մեծ հույսով: Փետրվարի 27-ին, միտինգում որոշվեց անցնել աշխատանքի, վերջ տալ միտինգներին և շաբաթ ու կիրակի օրերն աշխատելու միջոցով վերականգնել բաց թողածը:

Սակայն այլ ուղղությամբ զարգացան իրադարձությունները Ադրբեջանում: Սկսվեցին մասսայական ցույցերը,գործադուլները: Իրադարձությունների մեջ ներգրավվեցին ծայրահեղական այլ տիպի խմբավորումներ, ազգայնամոլ տարրեր, որոնք մի շարք շրջաններում հրահրեցին ազգամիջյան ընդհարումներ, բռնություններ, հրդեհներ, սպանություններ: Հարմար առիթ ստեղծվեց Ադրբեջանի տարածքում վաղուց պլանավորված Հայկական ցեղասպանության իրագործումը: Այդ պլանի իրագործումը սկսվեց Սումգայիթում: 1988թ. փետրվարի 27-29-ին՝ Մ.Ս.Գորբաչովի Ադրբեջանի աշխատավորներին ուղղված դիմումի հաջորդ օրը Սումգայիթում կազմակերպվեց 20-րդ դարի մի նոր ոճրագործություն՝ «Մահ հայերին» լոզունգով, որն իրականացվեց երեք օրվա ընթացքում: Սումգայիթում կրկնվեցին 1915թ. հայերի ցեղասպանության նույն մեթոդներն ու միջոցները առանց բացառության…

Ղարաբաղից հեռու գտնվող սումգայիթյան հայ ազգաբնակչությունը սպանդի ենթարկվեց միայն այն բանի համար, որ նրանք հայեր էին: Չնայած 73 տարվա տարբերություն գոյություն ուներ հայոց ցեղասպանության ու սումգայիթյան ողբերգության միջև, բայց և այնպես, երկու ոճրագործությունների ժամանակ էլ իրագործվեցին սպանությունների նույն մեթոդները՝ առաջնորդվելով նույն սկզբունքներով:

Իսկ լրատվական միջոցները հաղորդել են.«Սպանված է երեսուներկու հոգի: Հրկիզված է երկու հարյուր քառասունչորս բնակարան, թալանված ու ավերված են հարյուրավոր բնակարաններ, խանութներ, հաստատություններ:Տասնյակ ավտոմեքենաներ են կրակ տվել՝ մեջը գտնվող մարդկանցով: Տասներկու բռնաբարություն: Բոլորը խմբական…Պետությանը հասցվեց ավելի քան 7 միլիոն ռուբլու վնաս…»[4]:Եվ մահացել են մարդիկ զարհուրելի կոտանքներից…երեք օր շարունակ: Մինչդեռ խորհրդային զորքերը օգնության են եկել երեք օրից հետո՝ առանց կրակելու իրավունքի:

Սումգայիթում ադրբեջանական հրոսակները զինված են եղել դանակներով, հրազենով, վառելանյութի շշերով, մետաղյա ձողերով:

Սումգայիթյան ոճրագործությունն իրականացվեց Ղարաբաղի հայությանը վախեցնելու, ենթարկեցնելու համար: Սակայն 70 տարի շարունակ Ղարաբաղը «թաքնված» Սումգայիթ էր, ուստի այս նոր ոճրագործությունը ոչ միայն չվախեցրեց, այլ ավելի համախմբեց ղարաբաղահայությանը, և ծառս եղավ նրա դիմադրական ոգին:

Ո՛չ մասսայական լրատվական միջոցները, ո՛չ Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ քաղաքական գնահատական չտվեցին Սումգայիթյան ցեղասպանությանը, այլ այն ներկայացրին որպես անկարգություններ՝ կատարած խուլիգանամետ տարրերի կողմից: Այնինչ, 1915 թվականի հայկական ցեղասպանությունից, Խորհրդային Ադրբեջանի տարածքում 1918-1920թթ. հայկական կոտորածից մինչ 1988 թվականի սումգայիթյան ցեղասպանությունը և նրան հետևած հայկական ջարդերը Կիրովաբադում, Բաքվում, Շուշիում նայլուր, հիրավի, կարմիր թելի պես է անցնում տվյալ տարածաշրջանում հայկական հարցի «լուծման» հիմնական մեթոդը[5]:

Խորհրդային մամուլում ղարաբաղյան հակամարտությունը լուսաբանվում էր «Լեռնային Ղարաբաղում և նրա շուրջ» խորագրի ներքո:

«Նրա շուրջը» Ադրբեջանն է,որտեղ ստվարաթիվ հայ բնակչություն էր ապրում հնուց ի վեր իրեն պատկանող բնիկ հողերի վրա: Այդ է պատճառը, որ օրինաչափ է թվում ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի «Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի սոցիալ-տնտեսական զարգացումը արագացնելու միջոցների մասին»[6] որոշումը, ըստ որի՝ նախատեսվում էր բարեփոխական միջոցառումներ անցկացնել հոծ հայ բնակչությամբ շրջաններում, փաստորեն Ադրբեջանի ողջ տարածքում: Մասնավորապես նախատեսվում էր վերականգնել ու վերսկսել Բաքվի պետական թատրոնի աշխատանքները:

1988 թվականի փետրվարի 20-ից հետո, ըստ Ադրբեջանի ղեկավարության մտադրության, անհրաժեշտ էր պատժել Լեռնային Ղարաբաղի բնակչությանը: Ուստի Ադրբեջանը փորձում էր կատարել այդ խնդիրը՝ հետևողականորեն սաստկացնելով ճնշումը տարածաշրջանի վրա, վախեցնելու, ահաբեկչության ու պատերազմի էլ ավելի կատարելագործված միջոցներ հնարելով: Հատկանշական է, որ Բաքվի ղեկավարությունը նույնիսկ չէր էլ փորձում դիմել որևէ քաղաքական միջոցի՝ սկզբնավորվող հակամարտությունը լուծելու համար: Մյուս կողմից, իբրև խնդրի լուծման տարբերակ պատժիչ ու ռազմական միջոցների ընտրությունն Ադրբեջանի կողմից, հնարավոր է, թելադրված

[1] Перестройка и национальные отношения, Ереван,1989, стр.80.
[2] Խորհրդային Ղարաբաղ, Ստեփանակերտ, 1988,27 փետրվարի:
[3] Կոմունիստ, Երևան, 1988,28 փետրվարի:
[4] Կոմունիստ, Երևան, 1988,20 օգոստոսի:
[5] Տես՛ Կոմունիստ(ռուսերեն), Երևան, 1989,28 հոկտեմբերի:
[6] Տես՛ Նույն տեղում, 1988, 29 մարտի:

էր խաղաղ լուծման ցանկության չգոյությամբ: Պարզ էր, որ Բաքուն մտադիր էր օգտագործել «բարենպաստ» իրադրությունը Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի բնիկ բնակչությանը լրիվ արմատախիլ անելու նպատակով:

Սումգայիթը կազմակերպվեց Մ.Ս.Գորբաչովի Ադրբեջանի աշխատավորներին ուղղված դիմումի հաջորդ օրը: Վանդալիզմի այդ ակտը ուղղված էր հեղափոխական վերակառուցման քաղաքականության դեմ և նպաստեց Լեռնային Ղարաբաղի շուրջ իրադարձությունների սրմանը:

Սումգայիթում, որին հաջորդեց Կիրովաբադը,Խոջալուն, Շուշին, Բաքուն, Գետաշենը, Հադրութը, Շահումյանը և հայկական մյուս վայրերը, տեղի ունեցած հայերի ցեղասպանությանը չտրվեց քաղաքական գնահատական: Մ.Ս.Գորբաչովը, դիմելով Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդներին, փորձեց տալ սոսկ ստեղծված իրավիճակը, իրականությունն ու հանցագործությունը սքողող գնահատական: Նույն կերպ վարվեց 1988 թվականի հուլիսի 18-ին գումարված ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նիստը:

Երևանում, Հայաստանի մյուս քաղաքներում, ամբողջ Արցախում տեղի ունեցան միտինգներ ու ցույցեր, որոնց մասնակիցներն իրեն բողոքն ու ցասումն արտահայտեցին «սումգայիթ» կազմակերպողների դեմ: Կենտրոնական վարչակարգի կողմից Սումգայիթի ցեղասպանության նկատմամբ արձագանքը պարզապես հանցավոր էր:

1988 թվականի մարտի 9-ին ԽՄԿԿ ԿԿ տեղի ունեցավ խորհրդակցություն՝ Ղարաբաղի հարցի կապակցությամբ, ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի անդամների և ԽՄԿԿ ԿԿ քարտուղարների, ինչպես նաև Ադրբեջանի ԽՍՀ և Հայաստանի ԽՍՀ ներկայացուցիչների մասնակցությամբ:Մ.Ս.Գորբաչովը իր ելույթում նշեց, որ ստեղծված դժվար իրադրության մեջ գլխավորը լենինյան ազգային քաղաքականության հիմունքների հետևողական անցկացումն է, ադրբեջանական և հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդումը: Նա միաժամանակ հայտնեց ԽՄԿԿ ԿԿ Քաղբյուրոյի որոշման մասին՝ ԿԿ քարտուղարությանը հանձնարարել Լեռնային Ղարաբաղում կուտակված հիմնախնդիրների, նրա շուրջ ծագած ազգամիջյան հարաբերությունների պատճառների խոր և բազմակողմանի ուսումնասիրումը և վերամշակել համապատասխան առաջարկություններ[1] և դրանք դնել ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ կառավարության քննարկմանը:

Այնուհետև նորացվեցին Հայաստանի և Ադրբեջանի կուսակցական ղեկավարությունները: Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար դարձավ Ա.Խ.Վեզիրովը, իսկ Հայաստանի Կոմկուսի ԿԿ առաջին քարտուղար ընտրվեց Ս.Գ.Հարությունյանը:

1988 թվականի հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանը, ողջունելով 1988թ. փետրվարի 20-ի ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանի որոշումը, ընդունեց որոշում ԼՂԻՄ –ը մտցնել Հայաստանի կազմի մեջ՝ դրանով իսկ ուղղելով 1920-ական թվականներին թույլ տված պատմական սխալը[2]:

Ի պատասխան այդ որոշման՝ Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն Խորհրդի նստաշրջանը հունիսի 17-ին որոշեց համարել անընդունելի ԼՂԻՄ-ը Հայաստանի կազմի մեջ մտցնելը՝ հենվելով Սահմանադրության 78 հոդվածի վրա, ըստ որի տերիտորիալ փոփոխությունները պետք է իրականացվեն միայն միութենական հանրապետության համաձայնությամբ: Սակայն նստաշրջանում քննարկվեց ոչ թե ԼՂԻՄ մարզխորհրդի նստաշրջանի որոշումը, այլ ԼՂԻՄ պատգամավորների դիմումը, որն իրավամբ ընդգծում է մարզխորհրդի նստաշրջանի որոշման անզորությունը[3]:

Չնայած որ Ադրբեջանական կառավարությունը անում էր ամեն ինչ սպանելու ղարաբաղյան շարժումը, այնուամենայնիվ դա նրան չհաջողվեց:

Այսպիսով, խորհրդային տասնամյակների ընթացքում Լեռնային Ղարաբաղում, որը Ադրբեջանի Հանրապետության վարչատարածքային կառուցվածքում հանդես էր գալիս որպես ինքնավար վարչական միավոր, հասունանում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամը, որը հանրապետական մարմինների կողմից ստեղծված արհեստական խոչընդոտների հետևանքն էր:

Տասնամյակներ շարունակ Լեռնային Ղարաբաղը հանդիսանում էր Ադրբեջանի Հանրապետության հումքային կցորդը և մարզի սահմաններից դուրս գտնվող արդյունաբերական, շինարարական և գյուղատնտեսական հիմնարկ-ձեռնարկությունների գլխավոր մատակարարը: Դա կաշկանդել է նրա տնտեսական զարգացումը, մանավանդ, որ լիակատար չեն օգտագործվել ոչ գյուղատնտեսության, ոչ էլ արդյունաբերության զարգացման հնարավորությունները և ագրարային տարածաշրջան հանդիսացող ԼՂԻՄ-ի գյուղատնտեսության զարգացման ցուցանիշները անհամապատասխան էին:

Ադրբեջանի վարած քաղաքականությունը կայանում էր նրանում, որ այն իրականացնում էր խորհրդային կենտրոնական մարմինների վարած քաղաքականության և երկրում տիրող տնտեսական ճգնաժամային իրավիճակի համապատասխան, որպիսին տիրում էր և Ադրբեջանում, որի տնտեսությունը խորհրդային միության ընդհանուր տնտեսական համալիրի կազմի մեջ էր ընդգրկված: Ուստի այդ վիճակից դուրս գալու համար ադրբեջանական կառավարությունը տնտեսական ճնշող քաղաքականություն էր վարում ԼՂԻՄ-ում:

Այնուամենայնիվ, ԼՂԻՄ-ը խորհրդային տասնամյակներում, չնայած ստեղծված արհեստական արգելանքներին, շարունակում էր իր տնտեսությունը հնարավորին չափով զարգացնել: Տնտեսության բնագավառում մարզի ձեռք բերած նվաճումների հիմքը պետք է փնտրել տարածաշրջանի ներսում, այլ ոչ թե դրսում՝ Ադրբեջանի կառավարության ու նրա ջանքերի հետ կապել, ինչպես փորձում էին ցույց տալ հանրապետության ղեկավար մարմինների և մարզի ադրբեջանամետ մարզկոմի հաճկատար քարտուղարները:

Ադրբեջանի կառավարության ջանքերով 1960-80-ական թվականներին մարզում նկատելի էր հանրակրթական դպրոցների և ուսումնարանների կրճատման, անգրագիտության առկայության փաստեր, առողջապահության զարգացման ցածր ցուցանիշների, բնակարանային շինարարության պլանային ծավալների զգալի կրճատման, բնակարանային շինարարության, կենցաղ-սպասարկման, կապիտալ ներդրումների բնագավառում գոյություն ունեցող

[1] Տես՝ Խորհրդային Ղարաբաղ, Ստեփանակերտ, 1988, 11 մարտի:
[2] Նույն տեղում, 1988, 16 հունիսի:
[3] Бакинский рабочий, Баку, 1988,18 июня.

թերացումներ: Մարզում ստեղծված ժողովրդագրական տագնապալից իրավիճակը տասնամյակներ շարունակ իր ազգային իրավունքները սահմանափակելու, ազգային արժանապատվությունը ոտնահարելու հետևանքն էր:

ԼՂԻՄ-ի տնտեսության զարգացման արգելակումը Ադրբեջանի կազմում նրա գտնվելու տարիներին արտացոլվել է բնակչության սոցիալ-կենցաղային կացության մեջ և եղել է հայ բնակչության արտագաղթը խթանող հիմնական գործոններից մեկը:

Մարզում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակին ավելացվեց նաև տասնամյակներ շարունակվող բարոյական հարվածները՝ հայ ժողովրդի ինքնասիրության նկատմամբ կատարվող ծաղրանքները, ազգային մշակույթի կողոպուտն ու խոշտանգումը, ազգային իրավունքների ոտնահարումը, պատմական հուշարձանների ոչնչացումը, պատմության նենգափոխումը, հայոց լեզվի և ամեն հայկականի արգելումը, մարզի հայ մտավորականության հետապնդումներն ու հալածանքները և բազմաթիվ այլ արհավիրքներ:

Ուստի Լեռնային Ղարաբաղի համար 1988թ. Արցախյան շարժման նախօրյակին անհրաժեշտություն էր դարձել այնտեղ տարածքային տնտեսական հաշվարկի սկզբունքների արմատավորումը, Հայաստանի հետ տնտեսական, հոգևոր, մշակութային կապերի հաստատման ամրապնդումը, որը հնարավոր կդառնա արհեստականորեն բաժանվող մարզի քաղաքական միացումով Հայաստանի հետ:

Լեռնային Ղարաբաղի բնակչության 1988 թվականից սկսած պայքարը հանուն ինքնորոշման, հավանաբար հարկադրեց Մոսկվային ձեռնարկելու ԼՂԻՄ-ի տնտեսական իրադրության ուսումնասիրությունը, որի արդյունքը եղավ ԼՂԻՄ-ին 7 տարում 400 միլիոն ռուբլի կապիտալ ներդրումներ հատկացնելու որոշումը, այնուհետև ավելացվեց ևս 100 միլիոն ռուբլի: Այս գումարները ներդրվեցին Լեռնային Ղարաբաղի բացառապես ադրբեջանական գյուղերում: Այնուամենայնիվ, փաստ է, որ Մոսկվայում ճանաչեցին ԼՂԻՄ-ի տնտեսական ծանր վիճակը, ինչը և ցույց է տալիս Ադրբեջանի (դիսկրիմինացիոն) հայահալած քաղաքականությունը: Սակայն այն նույն Մոսկվան ԼՂԻՄ-ի իրավաբանորեն Ադրբեջանի կազմում գտնվելու ժամանակամիջոցում (1988-1991թ. սեպտեմբեր) փաստորեն ոչինչ չարեց իրադրությունը շտկելու համար: Իսկ այդ ժամանակաշրջանում Ադրբեջանը կտրուկ ուժեղացրել էր տնտեսական ճնշումը ինքնավար մարզի վրա:

Անհատի բռնակալական կամայականության պայմաններում Արցախի հայ ազգաբնակչության կյանքի իրավական ու բարոյական բոլոր չափանիշների բացահայտ կոխկրտումը, գյուղերի ավերվածություններն ու ամայացումը, մշակույթի և դպրոցների անմխիթար վիճակը, քանդված ճանապարհներն ու դատարկ խանութները և բազմաթիվ այլ արհավիրքները հասցրին ԼՂԻՄ-ի հայ ազգաբնակչության 80-ական թվականների ընվզումներին: Այդ ընդվզումներին զգալիորեն նպաստեցին նաև 70-ական թվականների վերջին և 80-ական թվականներին ադրբեջանական հրատարակչություններում, մամուլում և հեռուստաթրագրերում լայնորեն ծավալված հակահայկական շովինիստական հարձակումները, որոնց ամենաուր ծայրերը ուղղված էին արցախահայության դեմ: Ավելի ռեակցիոն և հակամարդկային բնույթ ստացավ հայատյաց պատմաբանների (Զ. Բունիաթով, Ռ. Գոյուշով, Զ. Յամպոլսկի, Ախունդովա և ուրիշներ) արշավանքը, որի գերագույն նպատակն է հանդիսանում ապացուցել, իբրև թե Ղարաբաղի հայերը էթնիկական ոչ մի առնչություն չունեն Հայաստանում բնակվող հայերի հետ: Այսպիսով՝ 1988թ. արցախյան շարժումը, կարելի է ասել, որ միանգամից չի սկսվել: Մինչ այդ մի քանի անգամ բարձրացվել են Լեռնային Ղարաբաղի՝ Հայաստանին միացնելու հարցը:

Արհեստականորեն Հայաստանից՝ հոգևոր կենտրոնից, Լեռնային Ղարաբաղի բաժանումը և Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը հայ մտավորականների նկատմամբ կատարած հալածանքներն ու հետապնդումները ավելի սրեցին հայ-ադրբեջանական հարաբերությունները, և ավելի ակնառու դարձավ Ղարաբաղյան հիմնախնդիրը, այսինքն, անհրաժեշտ ու անհապաղ դարձավ Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին, որին արժանի նվիրատվությամբ արձագանքեց ղարաբաղահայությունը:

Փլուզման եզրին կանգնած ԽՍՀՄ-ում ընդունված վերակառուցման կուրսը հույսեր արթնացրեց հայ ժողովրդի մեջ իր քաղաքական միացումը մայր հայրենիքի հետ իրագործելու հնարավոր ճանապարհին: Եվ 1988թ. փետրվարին մարզի հայ բնակչությունը իր վճռական որոշումը կայացրեց՝ Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին, դիմել Հայաստանի Գերագույն Խորհրդին՝ ընդունելու «Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու մասին» մարզկոմի ընդունած որոշումը, և միաժամանակ միջնորդել ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադր.ԽՍՀ-ի կազմից Հայկական ԽՍՀ-ի կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը: Ամուր հիմք և պատմական պատճառներ ունենալով՝ արցախահայությունը փորձեց սահմանադրության շրջանակներում լուծել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցը՝ դրանով իսկ ազատվելու Ադրբեջանի գաղութային կցորդը լինելու կարգավիճակից և վերացնելու արհեստականորեն Ղարաբաղի և Հայաստանի միջև Ադրբեջանի ջանքերով առաջացած անկլավային վիճակը:

Լեռնային Ղարաբաղի նկատմամբ Խորհրդային Միության կողմից թույլ տված սահմանադրական խախտումը, ինչպես նաև նրա աջակցությամբ Ադրբեջանի հանրապետության ղեկավարությունը Լեռնային Ղարաբաղի ազգակործան քաղաքականության գործում, հասցրին հակասությունների սրման և ռազմական գործողությունների ծավալմանն ու ակտիվացմանը հայ-ադրբեջանական հարաբերություններում:

Դե-յուրե Խորհրդային Միությունը իր վերակառուցման քաղաքականությամբ ազգերի ինքնորոշման իրավունքն էր հռչակել, սակայն դե-ֆակտո՝ նա ինչպես և Ադրբեջանի ղեկավարությունը դեմ էր տարածքային վիճահարույց հարցերի լուծմանը:

Այս կոնկրետ դեպքում Լեռնային Ղարաբաղի հարցը դիտվեց որպես տարածքային հարց և ոչ թե ազգային ինքնորոշման հարց: Ուստի միութենական և հանրապետական մարմինների կողմից ձեռնարկվեցին բոլոր միջոցները ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմում պահելու համար: Չնայած ստեղծված արգելքներին՝ Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի հայ ազգաբնակչության միահամուռ ուժերով Լեռնային Ղարաբաղը ձեռք բերեց անկախություն:

1988 թվականի փետրվարն արձանագրվեց մեր ժողովրդի պատմության մեջ իր նախադեպը չունեցող համաժողովրդական շարժման ծավալմամբ, որով սկզբնավորվեց արցախյան հիմնախնդրի նորօրյա փուլը:

Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը արցախահայության նորանկախ պետականության զարգացման արդի փուլի առաջնահերթ հիմնախնդիրներից է, որը,սակայն,մեր ազգի կենսական շահերի տեսանկյունից ունենալով այդ աստիճանի հույժ կարևորություն, ոչ բավարար կերպով է ներկայացվում ինչպես հայ հասարակայնությանը, այնպես էլ միջազգային հանրությանը (տարբեր կառույցներին ու ատյաններին):

Երկու տասնամյակից ավելի ժամանակաշրջանի հեռավորությունից թվում է, թե հայերս պետք է տիրապատեինք հիմնախնդրի բոլոր նրբություններին, նրա առանցքային հարցերի վերաբերյալ ունենայինք ճշգրտված ու խմբագրված, հղկված ու ստուգաբանված բանաձևեր: Սակայն, ստիպված ենք այսօր փաստել, որ նախընթաց տարիներին, ձևավորվել ու միջազգային շրջանակներում արմատավորվել է խնդրի ձևախեղված, անհայանպաստ մի կերպար, որը բացառում է հակամարտության արդար կարգավորումը: Հիմնախնդրի տեղեկատվական կերպարում խեղված են գրեթե բոլոր բանալի հասկացությունները:

1988 թվականին բարձրացրած ղարաբաղյան հիմնահարցը հակամարտության վերածվեց այն պահին, երբ Ադրբեջանն ուժ կիրառեց, ինչն, ի վերջո, հանգեցրեց ռազմական գործողությունների:

Տարիների հեռավորությունից համարձակորեն նշում ենք, որ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ողբերգական իրադարձություններ՝ արցախահայությունը հավատարիմ մնաց իր անկախության հաստատման կայուն ձգտմանը և արյան բովում 1991թ. սեպտեմբերի 2-ին թրծեց իր անկախությունը. ԼՂԻՄ-ի և Շահումյանի շրջանի միավորմամբ հռչակվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը: